3070

ՋԱՐԼԶ ԴԻԿՔԵՆՍ

ԲԱՍՏԻԼԻ ԿԱՎԱՆԱՎՈՐԸ

ՊԵՏԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — ՄՈՍԿՎԱ — 1935

ՋԱՐԼԶ ԴԻԿԿԵՆՍ

ԲԱՍՏԻԼԻ ԿԱԼԱՆԱՎՈՐԸ

ՀՈՏՎԱԾ «ՍՄՄԱՍՔՆԵՐ ՑԵՐԿՈՒ ՔԱՂԱՔԻ ՄՍՍԻՆ» ԳՐՔԻՑ

Թարգմանեց ՀՈՎՍԵՓԻ

Նկարներց Ա. ԵՍՊՐԵՍԿՈՎԻ

Ա 38313

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1985

Գատ. խմբագիր՝ Ա. Հայրյան
Լեզ. խմբագիր Հ. Պետրոսյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Տեր-Դավթյան
Սրբագրիչ Մ. Գեվորգյան

Գլավլիտ 258
Հրատ. № 3458
Տիրաժ 4000

Հանձնված է արտ. 22/X 1935 թ. Ստորագրված է տպելու 1/XI 1935 թ.
Սֆ. Ա5 — 148 X 210. Գաղափար 6067
Типография им. Сталина 1932 г. ЛЧКПТ Ростов на-Дону.

Ես, Ալեքսանդր Մանեան, մի զժբախտ բժիշկ. ծննդյամբ Բոսֆոր քաղաքից, հետագայում փոխադրված Փարիզ, գրում եմ այս տխուր տողերը մոայլ խցումս, Բաստիլի պատերի մեջ՝ 1767 թվի դեկտեմբերին։ Գրում եմ գաղտնի ու ընդհատումներով, ամենածանր պայմաններում։ Գրվածքս թաքցնում եմ յես վառարանի պատի մեջ, ուր ատելաբար ու մեծ ջանքով թաքստատեղ եմ պատրաստել նրա համար։ Մի գիտե, թերևս մեկի կարեկից ձեռքը գտնի այս գրվածքն այնտեղ, յերբ յես իմ վշտերի հետ փոշիացած կլինեմ արդեն։

Դժվարությամբ եմ խղմզում այս բառերը ժանգոտ մեխի ծայրով, թաթախելով այն ածխի փոշու և վառարանի մրի մեջ՝ իմ արյունով շաղախված։ Գրում եմ բանտարկությանս տասներորդ տարվա վերջին ամսին։

Հույս չքացել է իսպառ։ Ես արդեն նկատում եմ ստվերի նշաններ իմ մեջ ու գիտեմ, որ բանտարկությունս յերկար չի տևա անվտանգ։ Բայց հանդիսավոր կերպով հայտարարում եմ, որ այս բոպեիս յես միանգամայն ուիրապետում եմ իմ մտքերին, հիշողությունս անդն է ու թարմ և գրում եմ զուտ ճշմարտությունը։

Մի ամպամած, բայց յուանկա գիշեր, 1767 թվի դեկտեմբերի յերկրորդ կեսին (կարծեմ 22-ին) յես զուրս յեկա թարմ օդ ծծելու։ Իմ բնակարանը Բժշկական դպրոցի փողոցումն էր։ Դանդաղ ու մտախոհ գնում եյի յես Սենայի ամայի գետափնյա փողոցով, յերբ հանկարծ լսեցի յետևից սլացող մի կառքի դղրդոց։ Կառքի տակ ընկնելուց վախենալով՝ մի կողմ քաշվեցի։ Բայց հենց այդ միջո-

ցին կառքի պատուհանից յերևաց մի գլուխ ու մի բարձր ձայն հրամայեց կառապանին կանգնել։

Կառքը դանդաղեցրեց իր ընթացքը՝ հենց վոր կառապանը կարողացավ պահել ձիերին, ու նույն ձայնը կանչեց ինձ՝ անունս տալով։ Ցեռ անմիջապես պատասխանեցի։ Մինչ այդ՝ կառքն արդեն կարողացել եր ամբողջովին առաջ սլանալ, վոր մինչև յես կհասնեի, նրա մեջ նստած յերկու տղամարդիկ, կառքի դռնակը բանալով, դուրս յեկան ճանապարհի վրա։ Ցեռ նկատեցի, վոր յերկուսն էլ փաթաթվել եին պատմուճանների մեջ ու կարծես թաքցնում եին դեմքերը։ Մինչև նրանք կողք-կողքի կանգնած եին կառքի դռնակի մոտ, յես նկատեցի նույնպես, վոր յերկուսն էլ կարծես իմ տարիքիս են, կամ մի փոքր ավելի յերիտասարդ ու չափազանց իրար նման իրենց հասակով, կազմվածքով, ձայնով, և վորքան կարողացա յես դատել, նաև իրենց դեմքով։

— Դուք եք բժիշկ Մանեարը, — հարցրեց նրանից մեկը։

— Այո։

— Բժիշկ Մանեարը, ծննդյամբ Բոլեյից, — ասաց մյուսը, — յերիտասարդ բժիշկ, սկզբում հմուտ վիրաբույժ, իսկ վերջին յերկու տարում հռչակ հանած Փարիզում։

— Այո, — պատասխանեցի յես, — յես այն բժիշկ Մանեան են, վորի մասին դուք խոսում եք այդպես զվարճանքով։

— Մենք յեղանք ձեր բնակարանում, — ասաց առաջինը, — բայց գժբախտաբար ձեզ այնտեղ չգտանք։ Իմանալով, վոր դուք գնացել եք զբոսնելու, հավանորեն այս կողմերը, մենք՝ յեկանք, հույս ունենալով, վոր ձեզ կհասնենք։ Ձեզ՝ բարեհաճի կառք նստել։

Ցերկուսն էլ աչքի եին ընկնում իրենց հրամայական ձևերով և, ասելով այդ, կանգնեցին այնպես, վոր յես մնացի կառքի դռնակի ու նրանց մեջև։ Նրանք զինված եին, յես — վեշտ։

— Ներեցեք — տարակուսեցի յես, — բայց յես սովորաբար

հարցնում եմ, թե ով է պատիվ անում ինձ, դիմելով իմ ոգնության և ինչ կարիքի համար են հրավիրում։

Այս հարցին պատասխանեց յերկրորդ խոսողը։

— Բժիշկ, ձեզ հրավիրում են դիրքի տեր մարդիկ։ Ինչ վերաբերում է դիպվածին, ձեր հմտությունն ասում է մեզ, որ ինքներդ ավելի լավ կպարզեք ձեզ այդ դիպվածը, քան մենք կարող եյինք նկարագրել այն։ Բավական է։ Ձեյիք հաճի կառք մտնել։

Ինձ թվում եր միայն հպատակվել, ու յես լուռ մտա կառք։ Նրանք յերկուսն ել հետևեցին ինձ, միայն վերջինը նախ կառքի վոտնատեղը նստա գցեց, ապա ինքը թռավ։ Կառքը հետ դարձավ ու սրընթաց թռավ հակառակ ուղղությամբ։

Ցեռ մեր խոսակցությունը քերի այստեղ ամենայն ճշտությամբ։ Ցերրեք չեմ կասկածում, որ մեր խոսակցությունը տեղի ունեցավ հենց այդպես, բառ առ բառ։ Ցեռ նկարագրում եմ բոլորն այնպես, ինչպես յեղել է, լաքելով միտքս, վորպեսզի չշեղվեմ նպատակից։

Կառքն իր յեռանը թողեց փողոցները, անցավ ուղեփակը և պտտում եր գաշտային ճանապարհով։

Ուղեփակից տաս կիլոմետրի վրա, — հեռավորությունը յես հետո հաշվեցի, յերբ նորից անցնում եյի այդ ճանապարհով, — կառքը ծռվեց գլխավոր ճանապարհից ու կանգնեց մեկուսացած մի տան առաջ։

Մենք յերեքս ել դուրս յեկանք կառքից ու խոնավ, փափուկ կածանով, այդու մինչև, ուր մոռացության մատնված շատրվանը թափվում եր ափերից, ուղղվեցինք դեպի այդ տունը։

Զրնգաց զանգակը, բայց իսկույն չբացին նրանից, ու մեկն իմ առաջնորդներից, ծանր ճամբորդական ձեռնոցով, թափով խփեց գաւոը բացող ծառայի յերեսին։

Այդ վարմունքի մեջ վոչինչ չկար զարմանալի ինձ համար, վորովհետև յես հաճախ եյի տեսել, թե ինչպես ազնվերն ատորին գասի մարդկանց ծեծում են ավելի անամոթաբար ու անխիղճ՝ քան շներին։ Բայց բանն այն է,

վոր ժյուռն էլ բարկանալով՝ ծառայի դեմքին խփեց ձեռքով։ Այստեղ արդեն յերկուսի նմանությունն ապշեցուցիչ էր և յես իսկույն հասկացա, վոր նրանք հարազատ յեղբայրներ են ու յերկվորյակներ։

Այն բոպեյից, յերբ մենք կանգնեցինք դրսի պարապի դռանը, վոր փակ էր (յեղբայրներից մեկը բացեց ու ներսից փակեց, յերբ մենք ներս մտանք), յես ինչ-վոր ճիչ լսեցի վերին հարկի մի սենյակից։ Ինձ իսկույն տարան այդ սենյակը, ու քանի բարձրանում եյինք սանդուղքներով, այնքան պարզ էր լսվում ճիչը։ Հիվանդը գալարվում էր անկողնում խիստ զառանցանքի մեջ։

Պացիենտս արտասովոր գեղեցկություն մի յերիտասարդ կին էր, քսան տարեկանից թերևս մի փոքր ավելի։ Նրա մազերը ցրված եյին՝ տեղ-տեղ պոկոտված, իսկ ձեռքերը կապված կողքերին՝ գոտիներով ու թաշկինակներով։ Յես նկատեցի, վոր այդ կապանքները աղամարդու դրծածություն առարկաներ են։ Դրանցից մեկի՝ փնջավոր ջրեղ շարֆի վրա յես տեսա կարած ազնվական տոհմանիշն ու ԷՆ տառը։

Յես նկատեցի այդ հենց առաջին բոպեին, յերբ քննում եյի պացիենտին, վորովհետև թավալվելով անկողնում՝ նա ստիպված անկողնի ափին ու շարֆին առավ բերանը՝ խեղդվելու ռիսկ անելով։ Իմ առաջին գործը յեղավ շարֆը բերանից հանել ու թեթևացնել նրա շնչառությունը։ Ահա հենց այդ միջոցին աչքիս ընկավ ասեղնագործ տառը շարֆի անկյուններից մեկում։

Յես զգուշությամբ դարձրի հիվանդին մեջքի վրա, ձեռքերը դրի կրծքին, վորպեսզի հանգստացնեմ նրան ու պահեմ անկողնում, և նայում եյի դեմքին։ Նրա լայնացած աչքերը մոլեգնորեն դեգերում եյին այս ու այն կողմ, և հաճախ զիլ ու ականջ ծակող ձայնով ճչում էր նա, միշտ կրկնելով նույն բառերը՝ « Իմ ամուսինը, իմ հայրը, յեղբայրս, հետո բարձր համբում էր մինչև տատանվելուն ու շշուկով արտասանում՝ «ամուսնս»։ Մի վայրկյան, վոչ

ավելի, նա սակվում էր, ձախը կորում, կարծես ոչնչի էր դնում և ապա նորից դիլ ճչում, քրքիջում էիմ ամուսինը, իմ հայրը, յեղբայրս, համբուրում մինչև տատներկուս ու նորից շշնջում՝ «սուսաստ»։ Բառերն ու հնձկլատանքը կրկնվում էին առանց մազաչափ փոփոխության ու ճիշները չեյին դադարում, բայց մի վայրկյան ընդմիջումից։

— Վաղուց է, որ այսպես շարունակվում է,— հարցրի յես։

Յեղբայրներին միմիանցից զոկելու համար յես կանվանեմ նրանց մեծ ու փոքր։ Մեծը, որ ավելի իշխանական էր, պատասխանեց ինձ.

— Յերեկ յերեկոյանից, գրեթե մի օր է։

— Իսկապես ունի՞ նա ամուսին, հայր, յեղբայր։

— Յեղբայր ունի։

— Երա յեղբոր հետ չի՞ արդյոք, որ յես խոսում եմ։ Նա պատասխանեց գերագույն արհամարհանքով.

— Վիճչ։

— Մեր ժամանակներս արդյոք տեղի չի՞ ունեցել վերեմ դեպք, որ նրա մարդուժ կապակցվեր տատներկու թվանշանի հետ։

Անհամբեր միջամտեց կրտսեր յեղբայրը.

— Ժամի տատներկուսը։

— Տեսնում եք, պարոններ,— ասացի յես՝ շարունակելով հիվանդի ձեռքերը պահել կրծքին,— վերքան յես անողուտ եմ իմ այն գրուբյամբ, որով դուք բերիք ինձ այստեղ։ Եթե յես առաջուց գիտենայի, թե ինչ եմ տեսնելու այստեղ, հետս գեղեր կվերցնեյի։ Իսկ այժմ մենք ահագին ժամանակ ենք կորցնում։ Այսպիսի մեկուսացած վայրում վիճչ մի դեղ չես հարի։

Մեծ յեղբայրը նայեց փոքրին, որը հպարտությամբ վրա բերեց. «Այստեղ կա մի արկղ դեղերով, հանեց պահարանից ու դրեց սեղանին։

Եթե բաց արի մի քանի սրվակ, հոտոտեցի, խցանները դրի շրթունքիս։ Այդ բոլորը քնաբեր դեղորայք եյին, ինքն

ըստ ինքյան թունավոր։ Բայց ուրիշ միջոց չկար ձեռքի տակ։

— Դուք կասկածում եք դրանց վերաբերմամբ, — հարցրեց կրտսերը։

— Դուք տեսնում եք, պարոն, որ յես մատաղիր եմ ազատելու դրանցից, — պատասխանեցի յես և այլես վոչինչ չասացի։

Մեծ դժվարությամբ ու յերկար ջանքերից հետո յես վերջապես հարկադրեցի հիվանդին կուլ տալ դեղը՝ ինչ չափով պետք եր։ Վորոշվեան վորոշ ժամանակից հետո յես մատաղիրը եյի կրկնել դեղը, բացի այդ՝ պետք եր դիտել դեղի ներգործությունը, յես նստեցի անկողնի մոտ։ Սենյակում ծառայում եր յերկչոտ, ընկճված տեսքով մի կին, այն ծառայի կինը, որ բացեց մեզ դուռը։ Նա անհանգիստ կերպով քաշվեց մի անկյուն։ Տունը խոնավ եր, հին, խրդճուկ կահավորված, — յերևում եր, որ նոր եյին բռնել ու ժամանակավոր։ Պատուհաններից կախված եյին ծանր, հին վարագույրներ, — ըստ յերևույթին նոր եյին խփել մեխերով, որ ճիշերը չլվան։ Իսկ այդ ճիշերը շարունակվում եյին միշտ նույն հետևողականությամբ ու նույն կանչերով։ Իմ ամուսինը, իմ հայրը, յեղբայրս, ու դարձյալ համրանք մեկից մինչև տասներկուսն ու ութսուն։

Անմիտ զառանցանքն այնքան կատաղի յեր, որ յես չքանդեցի հիվանդի ձեռքերին փաթաթած կապերը։ Յես միայն հետևում եյի, որ նրանք ցավ չպատճառեն նրան։

Ինձ համար միակ մխիթարանքն այն եր, որ հիվանդի կրծքին դրած ձեռքս մեղմացնող ներգործություն եր անում. բոպե առ բոպե հիվանդի դեմքը հանգստանում եր։ Բայց ճիշերը շարունակվում եյին ճռճռանքի ճչությամբ։

Գանի որ ձեռքս շատ թեթև քիչ հանգստացնում եր հիվանդին (ինձ թվում եր), յես լուռ նստած եյի անկողնի մոտ, իսկ յերկու յեղբայրները նայում եյին ինձ։

Հանկարծ մեծն ասաց.

— Մի ուրիշ պացիենտ էլ կա։

Ես ցնցվեցի ու հարցրի.

— Գուցե շատապ օգնություն է հարկավոր։

— Ավելի լավ է՝ ինքներդ նայեցեք, — պատասխանեց նա անտարբեր կերպով ու վերցրեց մոմը։

* * *

Մենք անցանք հետին սանդուխքով։ Մյուս պացիենտը պառկած էր գոմի կտրին շինված ձեղնահարկի նման մի սենյակում։ Այդ սենյակի մի կողմը ցածրիկ, ծեփված առաստաղով էր, իսկ մյուս կողմը՝ բոլորովին բաց։ Ներսում եղին կտուրի կղմինդրներն ու լայնքի գերաններն։ Հատակին թափված էր խոտի ու հարդի պաշար, ծառահողերի խրձեր վառելիքի համար ու մի կույտ խնձորավաղի մեջ։ Ես պիտի անցնեի այդ բոլորի մոտով։ Իմ հիշողություն պարզ է ու անսխալ։ Դիտմամբ փորձում եմ այն, վերհիշելով ամբ բոլոր մանր-մունր բաները, ու նորից տեսնում եմ այդ ամենն իմ խցում՝ Բաստիլի պատերի մեջ բանտարկություն տասերորդ տարվա վերջին, ճիշտ այնպես, ինչպես տեսա այն գիշերը։

Հատակին, մի խուրձ խոտի վրա, քարձը գլխի տակ կոխած՝ պառկած էր մի գեղեցիկ գեղջուկ պատանի, տասնյոթ տարեկանից վոչ մեծ։ Նա պառկած էր մեջքի վրա, ոտաները բաց, ոչ ձեռքի սեղմված բռունցքը բռնած կրծքին ու վառվռուն աչքերը հառած վերը... Ես չկարողացա նայել, թե վորտեղ է նրա վերջը, յերբ մի ծնկիս շոքած՝ կռացա նրա վրա. բայց հասկացա, վոր նա մեռնում է ուրբ գնդով տաքացած վերջից։

— Ես բժիշկ եմ, իմ խեղճ բարեկամ, թող նայեմ վերքդ։

— Նայելու կարիք չկա, — պատասխանեց նա — թող։

Վերքը նրա ձեռքի տակն էր, ու յես համոզում եղի, վոր ձեռքը վերցնի կրծքից։ Նա խոցված էր սրով, հավանորեն քան — քան չորս ժամ առաջ։ Սակայն վոչ մի բժշկական հմտություն չեր կարող փրկել նրան, յեթե

նուիրիսկ ոգնությունն անմիջապես հասցնելին։ Նա արագ մոտենում էր մահվան։ Ցեռ դարձա դեպի մեծ յեղբայրն ու տեսա, որ նա այդ սքանչելի պատանու վրա, որի կյանքը մարում էր, նայում է այնպես, կարծես այդ մի վիրավոր թռչուն՝ նապաստակ կամ ճագար լիներ և վազ իրեն յեղբայրակից — մարդ։

— Ի՞նչպես է պատահել այս, պարոն։

— Կատաղած լակոտը... Ճորտ եւ Հարկադրել է յեղբորս պաշտպանվել ու ընկել է նրա արիցս... ասես ազնվական լինի։

Այդ պատասխանի մեջ չկար ստվերն անգամ խղճահարության, տխրության կամ մարդկային կարեկցության։ Ծառայը կարծես հասկացնել էր տալիս, թե՝ անվայել և հաստատում, որ այդ խորթ ցեղի եյակը մեռնում է այդտեղ ու չի սասկում մարևե սովորական զան մուք քնում, իր ճիճվոտ ցեղի զրջանում։

Նա վիճաբանայն անընդունակ էր խղճալու այդ մանկանը կամ ցավելու նրա վիճակի համար։

Մինչդեռ նա խոսում էր, պատանու աչքերը դանդաղորեն դարձան նրա վրա, հետո նույն դանդաղությամբ նա դարձրեց ինձ վրա։

— Բժիշկ, դրանք սոսկալի դառներ են, այդ ազնվականները, բայց մենք՝ հասարակ շներս նույնպես թերթեմն հպարտ ենք լինում։ Դրանք մեզ կողոպտում են, վիրավորում, ծեծում, ապանում, բայց այնուամենայնիվ մեզ մոտ մնում է մի փոքր հպարտություն։ Նա... Դուք նրան տեսանք, բժիշկ։

Հիվանդ կնոջ ճիչերն այստեղից անգամ լսվում էին, թեև հեռավորությունը մեղմացնում էր նրա ձայնը։ Պատանին լսում էր այդ ճիչերն այնպես, կարծես կինը պատկած էր հենց այդտեղ։

Ցեռ պատասխանեցի.

— Այո, յես տեսա նրան։

— Նա իմ քույրն է, բժիշկ։ Շատ սարիներ այդ ազնվա-

կանանցն ապավեցին իրենց նոդկալի իրավունքով։ Նրանք դժբախտացրին, փչացրին մեր ամաչկոտ քույրերին, նրանք պատվաստուրկ արին նրանց։

Այնուամենայնիվ մենք ունեցինք լավ աղջիկներ։ Ցեռ գիտեմ այդ, իմ հայրն էլ ասել է ինձ այդ։ Նա լավ աղջիկ եւ Նա նշանված էր մի լավ տղի հետ, վոր նուշնպես դրանց հարսերից էր։ Մենք բոլոր գյուղացիներս մի կալվածատիրոջ ենք պատկանում... այ, դրան, վոր կանգնած է այստեղ։ Իսկ այն մյուսը՝ դրա յեղբայրն է... վատթարագույնը դրանց չար առնմից։

Պառանին խոսում էր մեծ ճիգ թափելով, հավաքելով վերջին ուժերը, բայց նրա հոգու արիությունը յերևան էր գալիս սոսկալի թափով։

— Այդ մարդը, վոր կանգնած է այստեղ, կողոպտել է մեզ։ Այդ բարձր անձնավորությունները միշտ կողոպտում են մեզ, հանապարհ շներիս։ Նա անխիղճ կերպով ծանրաբեռնել է մեզ հողային տուրքերով, ստիպում էր ձրի աշխատել իր համար, հրամայում էր մեր հացն իր ցրագացում աղալ, հրամայում էր իր անային թռչունները մեր հյուծված արտերում արածացնել, իսկ մեզ, մահվան յերկյուղի տակ, արգելում է պահել անգամ մի թռչուն։ Նա կողոպտել է, թալանել ու վախեցրել մեզ այնպես, վոր յերբ հաջողվում էր մեզ ձեռք բերել մի կտոր միս, մենք ուտում եյինք այն մեծ յերկյուղով, գուռ-պատուհան փակ, վորպեսզի դրա մարդիկ չտեսնեն ու ձեռքներից չխլեն այդ կտորը։ Եվ Նա այնպես վախեցրել է մեզ, այնպես թալանել, ու մենք այնպես աղքատացել ենք, վոր մեր հայրը հաճախ ասում էր. «Սոսկալի բան է այժմ յերեխաներ ունենալը։ Ավելի լավ է՝ մեր կանայք թող չբեր չունենն, ու մեր դժբախտ առնմը թող անհետ վերջանա»։

Ցեռ յերբեք չեյի տեսել, վոր վիրավորանքի զգացմունքն այդպիսի հրաբորբոք ուժով դուրս պոռթկա։ Ցեռ առաջ ել յենթադրում եյի, վոր այդ զգացմունքը թաքնված է ժողովրդի մեջ, բայց առաջ վոչ մի տեղ նա չեր արտահայտվել

այդպիսի հանկարծակի պոռթկումով, ինչպես այս մեռնող պատանու մեջ։

— Այնուամենայնիվ, բժիշկ, քույրս ամուսնացավ։ Ամուսինը հիվանդացավ, խեղճը, հենց այդ ժամանակ, ու քույրս պահպանում եր նրան, խնամում մեր տնակում, մեր շան քնում, ինչպես կասեր անշուշտ այդ մարդը։ Ցեվ ընդամենը մի քանի շաբաթ եր անցել հարսանիքից, յերբ այդ մարդու յեղբայրը մի անգամ տեսավ քրոջը ու քույրս ասեցին դուք յեկավ նրան, վոր նա սկսեց խնդրել յեղբորը, քրոջս իրեն տալու... վորովհետև արժեր միթե ուշադրություն դարձնել ամուսնու վրա... Այդ ազնվականը համառ եր, բայց իմ քույրը, վոր մի լավ, համեստ կին և, ասում եր դրա յեղբորն այնքան խիստ, վորքան և յես։ Ցեվ ինչ արին այդ յերկուսը, վորպեսզի սարսափեցնեն նրա ամուսնուն, վոր նա ինքը համոզի քրոջս...

Պատանու աչքերը, վոր շարունակ սևեռած եյին ինձ վրա, գանգատորեն դարձան այդ ժամանակ դեպի հանդիսատեսը, ու յերկուսի դիմքին էլ յես տեսա, վոր սատանն ամբողջապես ճշմարիտ և։ Մինչև իսկ արժի Բատիլում յես տեսնում եմ այդ յերկու իրար դիտող հպարտությունները, ազնվականի աչքերում փայլում եր արհամարհական անտարբերություն, գյուղացու աչքերում բոցավառվում եր վոտնահարված գդացմունքների փոթորիկն ու վրեժխնդրության անզուսպ ծարավը։

— Դուք գիտեք, բժիշկ, վոր այս ազնվականներն իրավունք ունեն մեզ, հասարակ շներս, լծելու սայլին ու իրանք մեջը նստելու։ Ցեվ նրանք լծում եյին նրան սայլին ու իրանք մեջը նստած՝ քշում։ Դուք գիտեք, վոր դրանք իրավունք ունեն մեզ քշելու դաշտ, վոր ամբողջ գիշերը լռեցնենք գորտերին ու պաշտպանենք նրանց թանկագին քունը խանգարելուց։ Ցեվ դրանք գիշերով քշում եյին նրան ապանիչ խոնավության մեջ, իսկ ցերեկը նոքից լծում սայլին։ Բայց նա անձնատուր չեղավ։ Վերջ։ Մի անգամ կեսորին նրան արձակեցին լծից ու բաց թողին, վոր

ուտի... յեթե ուսելու բան գտնի ինարկե... իսկ նա հեծ-
կլտաց տատներկու անգամ, ամեն հարվածին մի անգամ,
մինչև խփում եր ժամացույցը, ու մեռավ քրոջս կրծքի
վրա։

Գերմարդկային ճիգերով պահպանվում եր կյանքն այդ
պատանու մեջ, այնքան բուռն եր նրա մեջ կրած վիրա-
վորանքներն արտահայտելու ցանկությունը։ Նա ուժով
վանում եր խոցող մահվան խավարը ու նույն որոստա-
կան ուժով սեղմում եր աջ քռունցքը, ծանկելով վերքը։

— Այն ժամանակ, անա այս յեղբոր թուլությամբ,
մինչև իսկ նրա ոգնությամբ, այն մյուսը տարավ քրոջս
իր մոտ։ Այն, չնայելով, որ քույրս հակառակ եր, դիմա-
դրում եր, — գուցե գիտեք այդ, բժիշկ, կամ շուտով կիմա-
նաք, — այն յեղբայրը տարավ քրոջս իր մոտ սոսկ ժա-
մանցի, զվարճության համար, կարճ ժամանակով։ Ցեռ տեսա՝
ինչպես եյին տանում նրան ճանապարհով, յերբ անց կոց-
բին իմ մոտից։ Ցերը յես գուն դարձա, հոգս սիրտը պայ-
թեց։ Նա բնավ մի խոսք անգամ չեր արտասանել, և այդ
չարտասանված խոսքերը լցրել եյին նրա սիրտը լեփ-լե-
ցուն։ Այն ժամանակ յես վերցրի փոքր քրոջս (յես ունեմ
մեկն ել) ու թաղցրի այնպես, որ դա այլևս չի կարող
ձեռք բերել նրան... կամ համենայն դեպս չի լինի դրա
գերին... Հետո յես հետապնդեցի դրա յեղբորը մինչև այս
տունն ու լերեկ յերեկոյան մտա այստեղ... այն, հասարակ
շունը, բայց սուրը ձեռքին... Ո՞ւր ե այս ձեղնահարկի
պատուհանը...

Նրա աչքերը մթնում եյին հետզհետե ու շրջահայացը
նեղանում։ Ցետ շուրջս նայեցի ու նկատեցի, որ խոտն
ու հարդը ցիր ու ցան եր յեղած հատակին ու կոխկրտ-
ված, կարծես կռիվ եր տեղի ունեցել այդտեղ։

— Ռուբրա լսել եր իմ ձայնը, և նա յեկավ։ Ցետ ասացի
նրան, որ մոտ չգա, մինչև կսպանեմ նրա առնանդուղին։
Ներս մտավ նա, քրոջս դահիճը, սկզբում մի քանի մանեթ
շպրտեց ինձ ու հետո խփեց մարակով։ Բայց յես, թեև

հասարակ շուն, հարձակվեցի նրա վրա ու հարկադրեցի մերկացնել սուրը։

Քանի կտոր էլ արել է նա իր սուրն այժմ, այնուամենայնիվ ներկված է այն իմ հասարակ,ռասկական արյունով։ Նա հարկադրված էր մերկացնել այն ու պաշտպանվել... Ու կռվեց նա ինձ հետ իր բոլոր հմտությամբ՝ փրկելով իր կյանքը...

Մի քանի բոպե գրանից առաջ իմ աչքիս ընկան սրի կբառորտանքը, որոնք թափված էլին խոտերի մեջ։ Այդ սուրը ազնվականի սուր էր։ Մյուս անկյունում ընկած էր մի հին սուր, որ նման էր զինվորի սրի։

— Այժմ բարձրացրեք ինձ, բժիշկ, մի փոքր բարձրացրեք... Ո՞ւր է նա։

— Նա այստեղ չէ, — պատասխանեցի յես, բռնելով պատանուն ու կարծելով, թե հարցնում է մյուս յեղբոր մասին։

— Նա։ Գոռոզ՝ ինչպես բոլոր ազնվականները, նա վախենում է նայել ինձ վրա։ Ո՞ւր է այն մարդը, որ այստեղ էր։ Դարձրեք յերեսս նրա կողմը։

Ցեսս պատանու գլուխը բարձրացրի ու դրի ծնկիս։ Բայց, մի բոպե ընդգրկված արտասավոր ուժով, նա կանգնեց իր վողջ հասակով։ Այն ժամանակ յես էլ վեր կացա՝ աշխատելով պահել նրանս։

— Մարկիզ, — ասաց պատանին, աչքերը լայն հառելով նրա վրա ու բարձրացնելով աջ ձեռքը, — այն որերին, յերբ կգա հատուցումը ձեր բոլոր արարքների, պատասխանի յես կանչում ձեզ ու ձեր վողջ կատաղի սերունդը, մինչև վերջին շառավիղը։ Նշում եմ ձեզ արյունի խաչով, ի նշան այն բանի, որ այդ կլինի։ Այն որերին, յերբ այս բոլոր գործերի համար կգա հատուցումը, յես կանչում եմ ձեր յեղբորը — վատթարագույնին ձեր վողջ շար սերնդի, որպեսզի նա պատասխան տա առանձին։ Ցեսս նշում եմ նրան այս արյունի խաչով, ի նշան այն բանի, որ այդ կլինի։

Ա II/383/3
Ա 4442

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԱՍԱՐԱԿՉԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Նա յերկու անգամ ձեռքը դրեց իր վերքին ու ցուցամատով խաչ քաշեց ոդի մեջ։ Կանգնեց դարձյալ մի յերկու վայրկյան՝ ձեռքը բարձրացրած... և ապա ձեռքը թուլացավ, կախվեց, նա ինքն ել թուլացավ, ու յես պառկեցրի նրան՝ մեռած։

* * *

Ցերը վերադարձա յերիտասարդ կնոջ անկողնի մոտ, նա գառանցում եր դարձյալ ու ճչում։ Յես գիտեյի, վոր դեռ յերկար ժամեր կարող ե տևել այդ և հավանորեն կվերջանա գերեզմանի լռության մեջ։

Յես կրկնեցի նախկին դեղի դոզան ու նստեցի նրա անկողնու մոտ մինչև ուշ գիշեր։ Ճչում եր հիվանդն առաջվան պես բարձր ու զիլ, իսկ բացականչությունները արտասանում նույն պարզությամբ ու նույն կարգով.

— Իմ ամուսինը, իմ հայրը, յեղբայրս։ Մեկ, յերկու, յերեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը, տասը, տասնմեկ, տասներկու... Ցանա...

Այդ շարունակվեց քանվեց ժամ անընդհատ՝ այն բոպեյից, յերբ յես առաջին անգամ տեսա նրան։ Այդ ժամանակամիջոցին յես յերկու անգամ յեկա ու գնացի ու նորից նստեցի նրա անկողնի մոտ, յերբ նկատեցի, վոր նրա լեզուն սկսում ե ծանրանալ։ Յես արի այն նվազագույնը, ինչ կարելի յեր անել նրա ցավը մեղմելու համար, ու կամաց-կամաց նա ընկավ լեթարգիայի մեջ ու պառկած եր մեռելի պես։

Այդ նեման եր այն յերևույթին, յերբ յերկար ու սոսկալի փոթորկից հետո քամին հանդարտվում ե ու անձրևը դադարում։ Յես արձակեցի նրա ձեռքերն ու կանչեցի ապախնուն՝ ինձ ոգնելու, վոր պառկեցնենք հիվանդին ու փոխենք վրայի պատատոված շորերը։

Այդ ժամանակ յես նկատեցի հղիության առաջին նշաններն ու կորցրի նրա կյանքը փրկելու իմ մեջ ծնցած վերջին փոքրիկ հույսը։

— Ի՞նչ է, մեռավ, — հարցրեց մարկիզը, վորին առաջվան պես պիտի անվանեմ մեծ յեղբայր։ Նա նստել մտավ յերկարաճիտ կոշիկներով, ձիուց նոր իջած։

— Դեռ վիշ, բայց ըստ յերևույթին մեռնում է, — պատասխանեցի յես։

— Ինչքան ուժ կա այս հասարակ, ռամիկ մարդկանց մեջ, — ասաց նա՝ նայելով հիվանդին վորոշ հետաքրքրությամբ։

— Զարմանալի ուժ են տալիս վիշտն ու հուսահատությունը, — նկատեցի յես։

Նա սկզբում ծիծաղեց իմ խոսքերի վրա, հետո հոնքերը կիտեց։ Աթոռը վոտքով հրելով, վոր մոտեցնի իմ աթոռին, նա հրամայեց ազատանուն հեռանալ, նստեց ինձ մոտ և ասաց կիսաձայն։

— Բժիշկ, տեսնելով յեղբորս դժվար կացությունն այս ռամիկ ճորտերի հետ, յես նրան խորհուրդ տվի դիմել ձեր համաությանը։ Դուք բավական մեծ հռչակ ունեք և ինչպես յերիտասարդ մարդ, վոր կամենում է իր համար հաջող ապագա ստեղծել, հավանորեն կկարողանաք հոգալ և ձեր շահերի մասին։ Այն ամենը, ինչ այստեղ դուք տեսաք, կարելի յե միայն տեսնել, իսկ խոսել այդ մասին — չի կարելի։

Յես ակամա դրի հիվանդի շնչառությանն ու խույս տվի պատասխանից։

— Բարեհաճեցեք լսել, ինչ ասացի ձեզ, բժիշկ։

— Պարոն, — ասացի յես, — իմ արհեստի մեջ ընդունված է զգուշությամբ համարել այն ամենը, ինչ հաղորդում են մեզ մեր պացիենտները։

Յես պատասխանեցի նրան զգուշությամբ, վորովհետև չափազանց վրդովված եյին այն ամենով, ինչ տեսել ու լսել եյի այդտեղ։

Հիվանդի շնչառությունն այնքան աննկատելի յեր դարձել, վոր յես լարված աշխատում եյի զարկերակը զգալ ու սիրտը լսել — կյանքը դեռ պլպլում եր, և այդքան միայն։

Նստելիս յես յետ նայեցի ու. տեսա, վոր յերկու յեղբայրն էլ աչքերը հառած նայում են ինձ։

* * *

Յես այնպիսի ծայրահեղ դժվարությամբ եմ գրում, այնպես դաժան ցուրտ է, և այնպես սարսափում եմ բռնվելուց և ստորերկրյա խուլ խավար խուցն ընկնելուց, վոր ստիպված եմ կրճատել պատմվածքս։ Հիշողությունս մազաչափ անգամ չի թուլացել կամ մթագնել։ Նա կարող է վերականգնել ամեն մի մանրամասնը բան, ամեն մի խոսք, վոր արտասանվել է իմ և այն յերկու յեղբայրների միջև։

Հիվանդը ասաց մի շաբաթ։ Վերջում յես սկսեցի հասկանալ վորոշ ձայներ, վոր արտասանում էր նա ակամայից, կիսաբաց հալելով շրթունքները։ Նա հարցրեց, թե վիրտեղ է գտնվում ինքը, և յես պատասխանեցի. հետո հարցրեց, թե՝ ով եմ յես, և յես ասացի։ Իզուր աշխատեցի յես իմանալ նրա ազգանունը։ Նա մեզմ որորեց գլուխը բարձի վրա և թաքցրեց իր գաղտնիքը, ինչպես և պատանին։

Յես հնարավորություն չունեցի նրան հարցեր տալու, մինչև չասացի յեղբայրներին, վոր նա արագ թուլանում է ու չի ապրի մինչև մյուս որը։ Մինչև այդ ժամանակ, թեև յեղբայրներից վոչ մեկը չեր նկատում հիվանդի մեջ գիտակցության նշաններ, ու միայն յես ու աղախինը գիտեինք այդ, այնուամենայնիվ մերթ մեկը, մերթ մյուսը կտակածելով, միշտ նստում էին անկողնի գլխավերև վարագույրի յետևը, քանի յես այնտեղ էի։ Բայց, յերբ մատնցամ վախճանը, նրանք անհայտ կերպով անտարբեր դարձան դեպի այն տեղեկությունները, վոր յես կարող էի գուցե կորցել հիվանդից, կարծես, — խացեց ինձ այդ միտքը, — յես նույնպես մեռնում էի։

Յես շարունակ նկատում էի, վոր նրանց հպարտությունը սոսկալի կերպով խոցված է, և տանջում է նրանց այն հանգամանքը, վոր փոքր յեղբայրն (ինչպես յես ան-

վանում եմ նրան) ստիպված է յեղել իր սուրը խաչել մի գյուղացու հետ, և վոր այդ գյուղացին յեղել է մի մանուկ։ Միակ մտածմունքը, վոր ակներև կերպով ու իսկապես տանջում էր նրանց յերկուսին էլ, այն էր, վոր պատահած գնդիրը վերին ատենների ատրաստուցիչ էր նրանց ամենի համար և վոր նրանք ընկել են ծիծաղելի դրության մեջ։ Ցերը վոչ յեղբար հայացքն ընկնում էր աչքիս, նրա աչքերի արտահայտությունն ստիպում էր ինձ հասկանալ, վոր յես խորտակս տալիս յեմ նրա համար, և վոր յես ամեն ինչ իմացա պատանուց։ Նա ավելի քաղաքավարի ու սիրալիր էր ինձ հետ, քան մեծ յեղբայրը, բայց յես հասկանում էի նրան։ Նրանք յես տեսնում էի, վոր յես մատանջությունն տարիա յեմ դարձել և՝ մեծ յեղբոր համար։

Հիմանդը մնում էր դիշերից յերկու ժամ առաջ, — բոլոր առ բոլոր, իմ ժամացույցով, ճիշտ այն ժամին, յերբ առաջին անգամ յես տեսա նրան։ Նրա մենակ էր նրա մոտ, յերբ նրա մտատոչ, անոգնական գլուխը կամացուկ խոնարհվեց մի կողմ, ու վերջացան նրա բոլոր յերկրային վշտերն ու վիրավորանքները։

Ցեղրայրներն անհանգիստ սպասում էին ներքին սենյակներից մեկում, շտապելով վորքան կարելի է շուտ հեռանալ այստեղից։ Ցեռ, մենակ նստած անկողնի մոտ, լռում էի՝ ինչպես նրանք այստեղ հետ ու առաջ էին քայլում, մարակը շրխկացնելով յերկարաճիտ կոշիկներին։

— Վերջապես ժե՛ռմվ, — հարցրեց մեծը, հենց վոր յես ներս մտա։

— Մեռավ, — պատասխանեցի յես։

— Աչքդ լույս, յեղբայր, — ասաց նա՝ գառնալով փոքրին։

Նա առաջ էլ փաղ էր առաջարկել ինձ, բայց յես խրնդրել էի առայժմ համբերել։ Այժմ նա ավելց մի ծրար վոսկի։ Ցեռ վերցրի, բայց դրի սեղանին։ Ցեռ նախորդը մատանել էի այդ հարցի մասին ու վորոշել էի վոչինչ չվերցնել։

— Մնդրում եմ ներեք ինձ, — ասացի ես, — ներկա պարագաներում ես չեմ կարող վարձք վերցնել։

Նրանք իրար երես նայեցին ու խոնարհեցին գլուխներն ի պատասխան իմ ճնաս բարևին։

Ու մենք բաժանվեցինք առանց այլևս մի խոսք ասելու։

* * *

Ես հոգնեցի, հոգնեցի... հյուծվեցի գրկանքների մեջ։ Չեմ կարողանում նույնիսկ կարդալ այն, ինչ գրել եմ իմ ուժասպառ ձեռքով։

Առավոտը վաղ վառեցի ծրարը փոքրիկ արկղում, կափարիչի վրա իմ անունը գրած, դրած եր իմ դռանը։

Ես յերկար մտածեցի, թե ինչ անեմ։ Այդ որը ես վերջնականապես վճռեցի ազնվորեն մի նամակ գրել մինիստրին, համառոտակի բացատրելով գործի եյությունը, այսինքն, թե ինչպիսի յերկու պացիենտի ուզում են հրավիրել և ուր են տարել ինձ դրա համար։

Մի խոսքով — բոլոր պարագաները։ Ես գիտեյի, թե ինչ են նշանակում պալատական կապերը և ինչ չափերի յե հասնում ազնվականների անպատիժ ճնաղն իրենց գործած հանցանքների համար, դրա համար էլ քնով չեյի ապասում, թե հրապարակ կհանվի գործը, այլ ասակ կամենում եյի սեփական խիղճս մաքրել։

Ես վողջ գործն իրրև խոր գաղտնիք եյի պահում, նույնիսկ կնոջից, և վորոշեցի այդ մասին նույնպես հիշել նամակումս։ Ես քնով չեյի նախազգում վորևե իրական վտանգ ինձ համար, բայց ես գիտեյի, վոր այստեղ վտանգ կարող և լինել ուրիշների համար, յեթե հայտնի դառնա այն, ինչ գիտեյի յես։

Այդ որը ես խիստ զբաղված եյի հիվանդներով, դրա համար էլ չկարողացա վերջացնել նամակս։ Հետևյալ առավոտ յես սովորական ժամից էլ վաղ վեր կացա, վորպեսզի վերջացնեմ նամակս։ Նոր տարվա նախորյակին եր այդ։

Նամակս ավարտած, դրած է իմ առաջ։ Ցեռ ծրարեցի այն ու փաչվարի շնավատալով, քաշի ինձնից, ուղարկեցի նամակն անձամբ։

Ցեռ ավելի ու ավելի յեմ թուլանում։ Արդեն գրեթե անզոր եմ ի կատար ածելու այն խնդիրը, վոր վերցրել եմ ինձ վրա։ Սուրբ է այստեղ, խավար, իմ զգացմունքները թարմանում են, ու թախիծը, սև թախիծը ճմլում է սիրտս։

Պակասում է թուղթս։ Ցերեկ գրավեցին մի թերթիկս ու ոչնչացրին։ Այսոր յես պիտի վերջացնեմ իմ հաշվետվությունը։

Այն յերեկոյան, նոր տարվա նախորյակին, մոտավորապես ժամի 9-ին, դուռս զանգահարեց սև պատմուճանով մի մարդ, ասելով, վոր կամենում է ինձ տեսնել, կամաց հետևեց ծառային, մի յերիտասարդ տղի, վորին կանչում եյին Երնստ Դեֆարժ։ Ցերը ծառան նեղս մտավ սենյակ, ուր նստած եյի յես կնոջս հետ, — ո՞, իմ թանկագին կին, իմ սքանչելի ու ջահել կին, — մենք տեսանք այդ մարդուն անխառ կանգնած խորքում, մինչդեռ մենք յենթադրում եյինք, թե սպասելիս կլինի դռան մոտ։

Նա ասաց, վոր մի անհետաձգելի դիպվածի առթիվ, ինձ խնդրում են գնալ Սենտ-Ենորե փողոցը։ Ցեվ չեն ուշացնի, վորովհետև նեղքևում կառքն ինձ է սպասում։

Կառքն ինձ տարավ, նա ինձ քերեց իմ գերեզմանը։

Հենց վոր անից մենք հեռացանք, ինչ վոր մեկը պինդ կապեց բերանս ու ձեռքերս վոլորեց յետևս։ Ցերկու յեղբայրները գեմ դուրս յեկան մութ անկյունից։ Մարկիզն հանեց գրպանից իմ գրած նամակը, ցույց տվեց ինձ, այրեց լապտերի նրան մնացած մասին վրա ու մոխիրը վոտքով կոխկրտեց գետնի վրա։ Վոչ վոք վոչ մի խոսք չարտասանեց։ Ինձ տարան։ Ինձ քերին իմ կենդանի գամբարանը։

Ցեթե այս կամ այն յեղբոր քար սրտում այդ սոսկալի տարիներին ցանկություն ծագեր մի լուր տալ ինձ գոնե թանկագին կնոջս մասին, կամ գեթ մի խոսքով հիշեյին՝

կենդանի յե նա, թե մեռած, — յես կնամարեյի, թե քախտն իսպառ չի թողել ինձ։

Բայց այժմ յես հավատում եմ, վոր աբյուռնալի նշանը ճակատագրական պիտի լինի նրանց համար, և վոր նրանց սպասում ե մի անազոք ապագա։ Նրանց վերաբերմամբ ու իրենց սերնդի, մինչև վերջին զառավիղը, յես, Ալեքսանդր Մանեան, Բաստիլի դժբախտ կալանավորս, 1787 թվականի այս վերջին գիշերը, մահվան անտանելի ապնապի մեջ, կոչ եմ անում այն ժամանակներին, յերբ բոլոր այդպիսի արարքների հատուցումը կգա։



ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

ԳԱՍՍ Հիմնարար Գիտ. Գրադ.
220038313

ԳԻՆԸ 2Ռ ԿՈՊ.

A II 38313

ЧАРЛЗ ДИККЕНС

УЗНИК БАСТИЛИИ

АРМЕНГИЗ—ЭРИВАНЬ